

ԼԱՌԻՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆՀԱՏԻ ՍՈՑԻԱԼ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԱՐՄԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՆՈՐՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անհատի հոգեբանական հարմարողականությունն այն սոցիալ հոգեբանական խնդիրներից մեկն է, որ թույլ է տալիս բացահայտել անհատի և հասարակության փոխազդեցության օրինաչափությունները: Ընդհանուր առմամբ, հարմարողականությունը սոցիալական միջավայրին հարմարվելու, նրա հետ ոչ կոնֆլիկտային հարաբերություններ ունենալու մարդու ձգտումն է: Սակայն այս սահմանումը չի կարող ամբողջությամբ բացատրել անհատի ադատալտիվ վարքագծի մոդելների ողջ բազմազանությունը, քանի որ հաշվի չի առնում նրա պահանջմունքները և դրանց խթանիչ ուժը: Իրականում հրատապ պահանջմունքների իրականացման համար մարդն ինքը կարող է հանդես գալ որպես սոցիումի հետ գոյություն ունեցող փոխհարաբերությունների վերափոխման աղբյուր: Անձը, կյանքի իրադարձությունները գնահատելով ունեցած ձեռքբերումների և կորուստների տեսանկյունից, որոշում է, թե դրանցից որոնց նա պետք է հարմարվի, որոնք կարող է անտեսել, որոնց դեմ պետք է պայքարի: Այլ կերպ ասած՝ մարդու և սոցիալական միջավայրի միասնականության հիմնական ցուցանիշը անհատի կենսականորեն կարևոր պահանջմունքների իրացման մակարդակն է: Դա նշանակում է, որ մարդը ոչ թե պարզապես հակազդում է այս կամ այն իրավիճակին, այլ փաստորեն ստեղծում է մի աշխարհ, որում նա գոյատևում է: Կոնկրետ սոցիալական իրավիճակը իմաստավորվում է՝ պահանջմունքները բավարարելով: Ընկալելով, գնահատելով, զգայականորեն արտացոլելով շրջապատը՝ մարդը որոշում է սոցիալական միջավայրի հետ փոխհարաբերությունների բնույթը, օբյեկտիվ աշխարհի դրվագներից կառուցում է իր յուրահատուկ, անկրկնելի հոգեբանական կենսական տարածությունը, այլ կերպ ասած՝ հնարավորությունների տարածությունը[3]: Այսպիսով՝ կենսականորեն անհրաժեշտ պահանջմունքների իրացման հնարավորությունը կամ անհնարինությունը, սոցիալական փոփոխությունների հանդեպ մարդու վերաբերմունքի հիմնական չափանիշ է հանդիսանում: Հետևաբար, հասարակությունում տեղի ունե-

ցող ցանկացած վերափոխումները մարդու կողմից կգնահատվեն ելնելով պահանջմունքների իրացման հնարավորություններից: Սոցիալական փոփոխությունները մարդկանց մոտ տարբեր ռեակցիաներ են առաջացնում՝ ոմանք ընդունում և ողջունում են նորարարությունները, մյուսները դրանց կասկածամտորեն են վերաբերվում, իսկ ոմանք էլ դրանք կործանարար են համարում: Սակայն, չնայած հասարակական վերափոխումների հանդեպ տարբեր վերաբերմունքին՝ յուրաքանչյուր մարդ աղապտիվ վարքագծի իր ռազմավարությունն է մշակում: Անհատի վարքագծի աղապտիվային մոդելների ողջ բազմազանությունը մանրամասն նկարագրել հնարավոր չէ, քանզի յուրաքանչյուր անձ եզակի է: Այնուամենայնիվ, այս բազմազանության հիմքում դրված են սոցիումի հետ փոխհարաբերությունների գործընթացում մարդու կողմից կարևոր պահանջմունքների բավարարման համար ներքին և արտաքին ռեսուրսների օգտագործման տիպիկ եղանակներ, այսինքն՝ կարելի է առանձնացնել անհատի աղապտացիայի տիպերը: Աղապտացիայի տիպ ասելով՝ հասկանում ենք անհատի հարաբերականորեն կայուն սոցիալ-հոգեբանական հատկանիշների կառուցվածքայինորեն կազմակերպված ամբողջականություն, որոնք ապահովում են կենսականորեն անհրաժեշտ պահանջմունքների իրացումը: Այսպես, վերլուծելով մարդու կենսագործունեությունը անկայուն իրավիճակում՝ Ա.Կ. Բոլոտովան առանձնացնում է անհատի աղապտացիայի չորս ընդհանրացված տիպեր[1]: Առաջին տիպի անհատն ուղղորդվում է դեպի ձեռքբերումները, շրջապատող աշխարհի փոփոխությունները, հնարավորությունների օգտագործումը և սեփական հնարավորությունների փորձարկումը: Նա ձգտում է ընդլայնել սոցիալական շփումները, ապագայի մեծ ծրագրեր է պլանավորում, իրեն դիտարկում է որպես իրավասու անձ: Աղապտացիայի երկրորդ տիպը բնութագրվում է նրանով, որ անհատը հիմնականում ուղղորդված է դեպի սեփական Ես-ի և մասնակիորեն վարքագծի ներքին փոփոխությունները: Երրորդ տիպի անհատը ցուցաբերում է հնազանդություն ճակատագրի հանդեպ, նրա գործնական կողմը շատ թույլ է արտահայտված, իսկ ապագան անհայտ է: Անհատի՝ աղապտացիայի չորրորդ տիպի մոդելը բնութագրվում է դառնության և հիասթափության զգացումով, նման մարդու մոտ բացակայում են ապագային ուղղված հետաքրքրությունները: Մ.Ա. Շաբանովան, առաջարկում է, աղապտացվողների չորս հիմնական տիպեր[2]: "Առաջադեմ աղապտացվողները" նրանք են, ովքեր նոր պայմաններում ավել կամ պակաս հուսալի միջոցներ են ձեռք բերել կենսական խնդիրների լուծման համար, որոնք թույլ են տալիս ավելացնել ձեռքբերումները և ավելի ազատ լինել: "Հետադիմա-

կան աղապտացվողները", ձգտելով հաղթահարել կենսական դժվարությունները, փորձում են յուրացնել սոցիալական միջավայրի հետ փոխհարաբերությունների նոր եղանակներ: Սակայն նրանց բոլոր ջանքերը թույլ են տալիս հասարակության մեջ գոյատևել միայն ձեռքբերումների նկատմամբ կորուստների գերակայությամբ: "Հետադիմական չաղապտացվողները" չունեն խնդիրների և դժվարությունների հաղթահարման հուսալի եղանակներ, նրանք չգիտեն՝ ինչպես շարունակել ապրել: Նրանց կենսամակարդակը նվազեցման ակնհայտ միտում ունի: "Առաջադեմ չաղապտացվողները" ևս չգիտեն, թե ինչպես շարունակել ապրել, սակայն, ի տարբերություն "հետադիմականների", ձեռքբերումների և կորուստների հավասարակշռությունը նրանք դրական են գնահատում: Այս տիպի ներկայացուցիչները կամ սոցիումում աղապտացվելու կամավոր փորձեր են անում և հույս ունեն պապգայում ավելի լավ կյանքի, կամ էլ օգտագործում են մեծ անկախությունը և անվերահսկելիությունը պորտաբույծի և հակասոցիալական կենսակերպ վարելու համար: Մեր կարծիքով, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 2. Սորիսի տիպաբանությունը[4], որը հիմնվում է աղապտացիայի՝ որպես այնպիսի գործողության ընկալման վրա, որն ուղղված է դեպի ազդակների և պայմանական նորմերի միջև կոնֆլիկտների լուծումը: Աղապտացիայի այս ըմբռնման շրջանակներում հեղինակն առանձնացնում է նրա հետևյալ տիպերը՝ 1. Մարդը զսպում է ազդակները և իր վարքագիծը վերահսկում է հաստատված նորմերի համաձայն: Նա ձնշում է այն հակումները, որոնք իրեն անհարմարություն են պատճառում, և զարմանալի ինքնատիրապետում է դրսևորում: Որպես կանոն այս տիպին պատկանող մարդիկ բավական ինքնուրույն են: 2. Մարդը ձգտում է թուլացնել լարվածությունը իր միջավայրի ինչ-որ մասի փոփոխության միջոցով (փոփոխություններ մտցնել իր շրջապատի ինչ-որ մասում): Այստեղ մարդը փորձում է փոխել աշխարհը և այն ծառայեցնել իր նպատակներին, նա ազդում է օբյեկտների վրա և դրանցում փոփոխություններ առաջացնում: 3. Մարդը կախված է իր շրջապատից, այսինքն՝ նրան բնորոշ է պասիվ ուղղորդվածությունը: Այս դեպքում մարդը օբյեկտին թույլ է տալիս գործել իր փոխարեն: Կախված երկու հատկանիշների համադրություններից, մշակութային նպատակներից և դրանց հասնելու սոցիալականորեն հավանության արժանացող միջոցներից՝ Ռ Մերտոնը[5] առաջարկում է առանձնացնել անհատի աղապտով վարքագծի հինգ տիպեր: Առաջին տիպը կոնֆորմիզմն (համահաշտեցումն) է: Այն ենթադրում է համաձայնություն հասարակության նպատակների և դրանց հասնելու օրինական եղանակների հետ: Երկրորդ տիպը իննովացիան (նորարա-

րությունն) է: Այս տիպի ներկայացուցիչներին բնորոշ է հասարակության նպատակների հետ համաձայնությունը և այդ նպատակներին հասնելու սոցիալականորեն հավանության արժանացող միջոցների ժխտումը: Երրորդ տիպը ռիտուալիզմն (արարողականություն, ծիսականություն) է: Աղապտացիայի նման մոդելը ենթադրում է սուրբեկտի համար չափազանց բարձր մշակութային նպատակների պահպանում կամ նվազեցում դրանց իրականացման սոցիալականորեն ողջունելի միջոցների հետ համաձայնության ֆոնի վրա: Չորրորդ տիպը ռեթիթիզմն (հեռացումը, խուսափումն) է: Այս տիպին պատկանող մարդիկ իրաժարվում են նախասահմանված մշակութային նպատակներից և իրենց վարքագծում օգտագործում են ինստիտուցիոնալ նորմերին չհամապատասխանող միջոցներ: Հինգերորդ տիպը խռովությունն է: Խուսափման նման այստեղ ժխտվում են և՛ նպատակները, և՛ դրանց հասնելու միջոցները, սակայն դրանց փոխարեն նորերն են առաջարկվում:

Այսպիսով, գոյություն ունեն անհատի աղապտիվ վարքագծի տարբեր տիպաբանություններ, որոնցում մեր կարծիքով այս կամ այն չափով արտացոլվում են հիմնարար չափանիշները՝ մարդու ակտիվությունը (Ա.Կ. Բոլտովա, Մ.Ա. Շաբանովա) և նրա վերաբերմունքը սոցիալական նորմերի հանդեպ (Չ. Մորիս, Ռ. Մերտոն):

Սակայն վերը բերված տիպաբանություններում չի արտացոլվում այս չափանիշների ազդեցությունը անհատի կողմից կարևոր, հրատապ պահանջմունքների իրացման գործընթացում: Բացի այդ, սոցիալ-հոգեբանական աղապտացիայի տիպաբանության կառուցումը երկու փոխլրացնող չափանիշների՝ էներգետիկ (անհատի ակտիվություն) և տեխնոլոգիական (պահանջմունքների իրացման եղանակներ), համադրության հիման վրա մեր կարծիքով թույլ կտա ավելի ամբողջական կերպով բացահայտել սոցիալական փոփոխությունների պայմաններում անհատի սոցիալ-հոգեբանական աղապտացիայի գործընթացը և բովանդակությունը:

Էներգետիկ չափանիշը ցույց է տալիս պահանջմունքների բավարարման գործընթացում անհատի ներգրավվածության աստիճանը, որը կարելի է ներկայացնել շարունակականորեն բացարձակ ակտիվից մինչև պասիվ-իներտ: Չնայած ակտիվության դրսևորման լայն դիապազոնին, այնուամենայնիվ կարելի է խոսել սոցիումի հետ փոխազդեցությունների գործընթացում անհատի կամ ակտիվ՝ երբ անհատը առավելագույն ջանքներն է ներդնում հրատապ պահանջմունքների բավարարման համար, կամ պասիվ՝ երբ մարդը անհատական ակտիվություն չի ցուցաբերում

հրատապ պահանջմունքների բավարարման համար, դիրքորոշման մասին:

Ադապտիվ տիպաբանության տեխնոլոգիական չափանիշը արտացում է սոցիալական նորմերի և պահանջների հանդեպ մարդու վերաբերմունքի համատեքստում նրա նախընտրությունը պահանջմունքների իրացման եղանակների ընտրության մեջ: Ղրա հետ կապված՝ պահանջմունքների բավարարման եղանակները կարող են լինել ինչպես սոցիալականորեն ողջունելի, այնպես էլ սոցիալականորեն դատապարտելի: Համապատասխանաբար կարելի է խոսել հասարակությունում ընդունված նորմերի և կանոնների պահպանման կամ խախտման հետ կապված երկու ծայրահեղ դիրքորոշումների մասին՝ ադեկվատ՝ պահանջմունքների իրացումը սոցիալականորեն ընդունելի եղանակներով և ոչ ադեկվատ՝ պահանջմունքների բավարարումը կատարվում է հասարակության նորմերին հակասող միջոցներով:

Բոլոր ժամանակներում հասարակությունը փորձում է ճնշել անհատի վարքագծի անցանկալի ձևերը, քանի որ դրանք սպառնում են նրա կայունությանը: Ընդ որում, հարկավոր է նշել, որ նորմայից շեղումները կարող են իրականացվել ինչպես դրական, այնպես էլ բացասական ուղղությամբ: Այսպիսով, մեր կարծիքով, սոցիալ-հոգեբանական ադապտացիայի տիպաբանության կառուցումը պետք է կատարվի նախ և առաջ անհատի՝ հրատապ պահանջմունքների իրացմանն ուղղված ակտիվության դրսևորման աստիճանի (ակտիվ-պասիվ), երկրորդ, դրանց բավարարման եղանակի (ադեկվատ-ոչ ադեկվատ) հաշվառմամբ: Այս դիֆուսիվ-հատկանիշների հիման վրա տեսականորեն կարելի է առանձնացնել սոցիալ-հոգեբանական ադապտացիայի չորս հիմնական տիպեր՝ ոչ ադեկվատ-ակտիվ, ոչ ադեկվատ-պասիվ, ադեկվատ-ակտիվ և ադեկվատ-պասիվ:

Գրականություն

1. *Болотова А. К.* Человек и время в ситуации социальной нестабильности // ОНС. 1997. N 6. С. 38 - 44.
2. *Шабанова М. А.* Добровольные и вынужденные адаптации // Свободная мысль. 1998. N 11. С. 34 - 45.
3. *Lewin K.* Field theory in social science; selected theoretical papers. N. Y., 1951.
4. *Moris C.* Varieties of Human Value. Chicago, 1956.
5. *Merton R. K.* On theoretical sociology. Five essays, old and new. N. Y., 1967.